Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. 2016 թվականի հոկտեմբերի 4-ի Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 123-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետում «Սույն կետի կիրառության իմաստով՝ 100 հազար դրամը գերազանցող ընդհանուր գումարով դեբիտորական պարտքը համարվում է անհուսալի դեբիտորական պարտքի գումարը բռնագանձելու պահանջը բավարարելու կամ մերժելու վերաբերյալ դատական ակտի (վճռի, որոշման կամ կարգադրության, բացառությամբ դեբիտորական պարտքի գումարը ներելու կամ այն որևէ հիմքով չպահանջելու վերաբերյալ կայացված վճռի, որոշման կամ կարգադրության)՝ օրինական ուժի մեջ մտնելու օրվանից.» բառերը փոխարինել «Սույն կետի կիրառության իմաստով՝ 300 հազար դրամը գերազանցող ընդհանուր գումարով դեբիտորական պարտքը համարվում է անհուսալի՝ դեբիտորական պարտքի գումարը բռնագանձելու պահանջով հայցը դատարանի կողմից վարույթ ընդունվելու մասին որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից (իսկ վեճն արբիտրաժի լուծմանը հանձնելու դեպքում՝ արբիտրաժային վարույթի սկզբի օրվանից) կամ դատարանի կողմից արձակված վճարման կարգադրության՝ օրինական ուժի մեջ մտած վճռի ուժ ստանալու օրվանից կամ գումարի բռնագանձման պահանջով նոտարի կողմից արձակված կարգադրության կողմերի համար պարտադիր դառնալու օրվանից, սակայն դեբիտորական պարտքի գումարը ներելու կամ այն որևէ հիմքով չպահանջելու վերաբերյալ կայացված վճռի, որոշման կամ կարգադրության ուժի մեջ մտնելու պահից դեբիտորական պարտքի գումարը այդ հարկային տարում ճանաչվում է որպես համախառն եկամտի ավելացում.» բառերով:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2025 թվականի հունվարի 1-ից, և տարածվում է դրա ուժի մեջ մտնելուց հետո ծագած պարտավորությունների վրա: